ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ

ԱՐԵՎԱԲՈՒՅՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հեռախոս
0236 6 00 81

ՈՐՈՇՈՒՄ No 12-Ն

"13" 12 2011թ.

ԱՐԵԱԲՈՒՅՐ ՀԱՄԱՅՆՔԻ " ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ " ՀԱՍՏԱՏՈՒՄԸ 2012Թ.-Ի ՀԱՄԱՐ

Հիմք ընդունելով " Տեղական ինքնակառավարման մասին " Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետը և ղեկավարվելով " Տեղական տուրքերի և վճարների մասին " Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով Արևաբույր համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Արևաբույր համայնքի " Տեղական տուրքերի և վճարների " հետևյալ դրույքաչափերը

1.ՀՀ օրենսդրությանբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբյեկտների համար

ա) մինչև 300 ք/մ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ:

բ) սույն կետի " ա " ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ:

բբ) 501-ից մինչև 1000 ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ:

բգ)1000 ք/մ և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 70000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար.

գ) մինչև 20 ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ:

դ) 20 և ավելի ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբ - յեկտների վերակառուցման, արդիականացման (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահ – մանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտիընդհանուր մակե-

ռեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ:
3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 5000 դրամ:
4. Համայնքի վարչական տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
ա) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000 դր.:
բ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000 դրամ:
5. Համայնքի տարածքում
ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ:
բ) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար ընթացիկ տարվա համար՝ 150000 դրամ:
6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին) և խաղատներին ժամը 24^{00}-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
ա) առևտրի օբյեկտների համար՝ 30000 դրամ:
բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 70000 դրամ:
գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 դրամ:
դ) խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ:
ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ:
զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ:
7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ 1 ք/մ –ի տեղական տուրքը սահմանվում է՝
ա) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ:
բ) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:
8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 1000 դրամ:
9. Սույն որոշման 1 –ին, 2- րդ և 3- րդ կետերով սահմանված դրույքաչափերի նկատմամբ կիրառվում է 0.5 գործակից:

Ավագանի՝

Ռ. Շիրոյան կողմ

Գ. Հովհաննիսյան կողմ

Հ. Թամոյան կողմ

Ա. Մելքոնյան կողմ

Հ. Մուխսյան բացակա

Ե. Հովհաննիսյան բացակա

Արևաբույր համայնքի

Ղեկավար Մ. Ավետիսյան